ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

2011 թ. «28» նոյեմբերի

Թիվ 487

Լոռու մարզպետ պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի 8-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ավագանու թիվ 62-Ա, 63-Ա, 64-Ա, 65-Ա, 66-Ա, 67-Ա, 68-Ա, 69-Ն, 70-Ն, 71-Ն, 72-Ա, 73-Ն որոշումները:

Գյուղապետ՝ Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N-62-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի բնակիչների դիմումները, համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Լեռնապատ համայնքի բյուջեի գործառնական դասակարգման 10 բաժնի 7 խմբի 1 դասի 4729 հոդվածով նախատեսված միջոցներից թույլատրել համայնքի ղեկավարին տալ դրամական օգնություններ հետևյալ բնակիչներին.

Ալիկ Բաբայան՝ հիսուն հազար դրամ
Սասուն Աշրաֆյան՝ հիսուն հազար դրամ
Լիդա Դավթյան՝ երեսուն հազար դրամ
Էմմա Աբազյան՝ քսան հազար դրամ
Արեն Աշրաֆյան՝ քսան հազար դրամ
Նորայր Հոռոմսիմյան՝ քսան հազար դրամ
Մարինե Բալայան՝ քսան հազար դրամ
Պայծառ Հակոբյան՝ քսան հազար դրամ
Շուշանիկ Բաբայան՝ քսան հազար դրամ
Մելսիկ Ոսկանյան՝ քսան հազար դրամ
Սամսոն Բաբայան՝ քսան հազար դրամ
Սիրուն Թումազյան՝ տասը հազար դրամ

Ընդամենը՝ երեք հարյուր հազար դրամ:

Կողմ (5) Դեմ (0) Չեռնապահ (0)

Արայիկ Թորոսյան
Բարսեղ Եսայան
Լյովա Դանիելյան
Հրայր Եղիազարյան
Սամվել Աշրաֆյան

Համայնքի ղեկավար՝ Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N-63-Ա

ՇԱՎԱՐՇ ԱՐՍԵՆԻ ԱԲԱԶՅԱՆԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի բնակիչ Շավարշ Աբազյանի դիմումը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 7-րդ կետով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Թույլատրել համայնքի ղեկավարին Շավարշ Արսենի Աբազյանին համարելու առանձին տնտեսություն:

Կողմ (5) Դեմ (0) Չեռնապահ (0)

Արայիկ Թորոսյան
Բարսեղ Եսայան
Լյովա Դանիելյան
Հրայր Եղիազարյան
Սամվել Աշրաֆյան

Համայնքի ղեկավար Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N-64-Ա

ԱՐՍԵՆ ՌՈՒԲԵՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի բնակիչ Արսեն Ավետիսյանի դիմումը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 7-րդ կետով Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Թույլատրել համայնքի ղեկավարին Արսենի Ռուբենի Ավետիսյանին համարելու առանձին տնտեսություն:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնապահ (0)

Արայիկ Թորոսյան
Բարսեղ Եսայան
Լյովա Դանիելյան
Հրայր Եղիազարյան
Սամվել Աշրաֆյան

Համայնքի ղեկավար՝ Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N-65-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող 06-041-202-078 ծածկագրի 0,2375 հա հողամասը, 06-041-202-077 ծածկագրի 0,0234 հա հողամասը օտարելու աճուրդ-վաճառքով՝ մեկնարկային գին ընդունելով կադաստրային արժեքը:

Կողմ (5) Դեմ (0) Չեռնապահ (0)

Արայիկ Թորոսյան
Բարսեղ Եսայան
Լյովա Դանիելյան
Հրայր Եղիազարյան
Սամվել Աշրաֆյան

Համայնքի ղեկավար Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N-66-Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՎ ՏՈՒՖԻ ՉԳՈՐԾՈՂ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔԻՑ ԹԱՓՈՆՆԵՐ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը, Լոռու մարզպետի թիվ 03.11.2011թ. թիվ 101/105.4/6086-11 գրությունը, «Լոռիի ճՇՇ» ՓԲԸ-ի տնօրեն Ա. Վարդանյանի 18.11.2011թ. թիվ 054 գրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Թույլատրել «Լոռիի ճՇՇ» ՓԲԸ-ին Լեռնապատ համայնքի վարչական տարածքում գտնվող այժմ չգործող սև տուֆի հանքավայրի տարածքից հավաքել ջարդոններ և թափոններ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ թափոնները համայնքի հաշվեկշռում չեն արտացոլված, չեն չափագրված, չունեն նաև հաշվեկշռային արժեք, ուստի այդ թափոններից անհրաժեշտ քանակով թույլատրել օգտագործելու անհատույց, այն պայմանով, որ «Լոռիի ճՇՇ» ՓԲԸ-ն կատարի Լեռնապատ համայնքի մինչև հին գյուղի կենտրոն հասնող ներհամայնքային ճանապարհի ձմեռային սպասարկման աշխատանքները:

Կողմ (5) Դեմ (0) Չեռնապահ (0)

Արայիկ Թորոսյան
Բարսեղ Եսայան
Լյովա Դանիելյան
Հրայր Եղիազարյան
Սամվել Աշրաֆյան

Համայնքի ղեկավար՝ Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N-67-Ա

ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի բնակիչ Աննա Բեգլարյանի դիմումը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Լեռնապատ համայնքի բյուջեի գործառնական դասակարգման 10 բաժնի 3 խմբի 1 դասի 4726 հոդվածով նախատեսված միջոցներից թույլատրել համայնքի ղեկավարին տալ դրամական օգնություն Աննա Բեգլարյանին՝ հիսուն հազար դրամ՝ սկեսայրի թաղման ծախսերը կատարելու նպատակով:

Կողմ (5) Դեմ (0) Չեռնապահ (0)

Արայիկ Թորոսյան

Բարսեղ Եսայան

Լյովա Դանիելյան

Հրայր Եղիազարյան

Սամվել Աշրաֆյան

Համայնքի ղեկավար Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N-68-Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 29-րդ կետով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Լեռնապատ համայնքի սեփականության ամենամյա գույքագրումը հետևյալ ձևով.

Գյուղապետարան՝ ա. հիմնական միջոցներ 149242858 դրամ
բ. մանրարժեք գույք 3786007 դրամ

Մանկապարտեզ՝ ա. հիմնական միջոցներ 2826349 դրամ
բ. մանրարժեք գույք 186306 դրամ:

Կողմ (5) Դեմ (0) Չեռնապահ (0)

Արայիկ Թորոսյան
Բարսեղ Եսայան
Լյովա Դանիելյան
Հրայր Եղիազարյան
Սամվել Աշրաֆյան

Համայնքի ղեկավար Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N-69-Ն

ԼԵՌՆԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 26 կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 60, 70, 72-րդ հոդվածներով Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լեռնապատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Լեռնապատի գյուղական համայնքի ղեկավարին՝ Լեռնապատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:
3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնապատի գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի Լեռնապատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին N 85 որոշումը:
4. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում Լեռնապատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնապահ (0)

Արայիկ Թորոսյան
Բարսեղ Եսայան
Լյովա Դանիելյան
Հրայր Եղիազարյան
Սամվել Աշրաֆյան

Համայնքի ղեկավար՝ Վանո Եղիազարյան

Հավելված
Լեռնապատ համայնքի ավագանու
2011 թ. նոյեմբերի 24-ի թիվ 69-Ն որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Լեռնապատ համայնքի գյուղապետարանի և նրա ենթակա կազմակերպությունների (գործողության մեջ է 2012 թ. հունվարի 1-ից)

Թիվ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորների քանակը (դրույք)	Ամսական պաշտոնական դրույքը հազ.դրամ
	Գյուղապետարան	15	1244.0
1	գյուղապետ	1	180.0
2	գ/պ տեղակալ	1	86.0
3	գ/պ օգնական	1	144.0
4	Համայնքային ծառայության առաջատար պաշտոնների երկրորդ ենթախմբի աշխատակազմի քարտուղար	1	85.0
5	Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի առաջատար մասնագետ – հաշվապահ	1	82.0
6	Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի առաջատար մասնագետ	1	82.0
7	Համայնքայի ծառայության կրտսեր պաշտոնների 2-րդ ենթախմբի 1-ին կարգի մասնագետ - գանձապահ	1	80.0
8	Համայնքայի ծառայության կրտսեր պաշտոնների 2-րդ ենթախմբի 1-ին կարգի մասնագետ	1	80.0
9	Համայնքայի ծառայության կրտսեր պաշտոնների 2-րդ ենթախմբի 1-ին կարգի մասնագետ	1	80.0
10	Համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 3-րդ ենթախմբի 2-րդ կարգի մասնագետ	1	80.0
11	հավաքարար	1	50.0
12	պահակ	1	65.0
13	պահակ	1	35.0
14	վարորդ	1	65.0
15	վարորդ	1	50.0
	մանկապարտեզ	4.7	193
1	վարիչ	1	50.0
2	հաշվապահ	1	32.5
3	դաստիարակ	0.7	45.5
4	դաս. օգնական	1	32.5
5	խոհարար	1	32.5

Համայնքի ղեկավար՝ Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N 70- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով.

Լեռնապատ գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ գյուղական համայնքում 2011թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Արայիկ Թորոսյան

Բարսեղ Եսայան

Լյովա Դանիելյան

Հրայր Եղիազարյան

Սամվել Աշրաֆյան

Համայնքի ղեկավար՝ Վանո Եղիազարյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 70-Ն
ՈՐՈՇՄԱՆ

Դրույքաչափեր

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ գյուղական համայնքի տարածքում 2012 թվականի համար տեղական տուրքերի և վճարների

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ,

բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ,

գ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար

սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6.000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 դրամ:

5.1 . «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500.000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

10.Համայնքի տարածքում սահմանել տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է՝ 5000 դրամ.

2) տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանվում է՝ 5000 դրամ.

3) տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ

կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից

վճարը սահմանվում է՝ 1000 դրամ:

Համայնքի ղեկավար՝ Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N 71- Ն

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 19-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 11 հոդվածով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Սահմանել Լեռնապատ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների հետևյալ միասնական դրույքաչափերը.

Տեղեկանք----------երեք հարյուր դրամ
Լիազորագիր---------- երեք հազար դրամ
Բնութագիր----------երեք հազար դրամ
Անասունների տեղեկանք--------հազար դրամ
Մանկապարտեզի օրավարձ----հարյուր դրամ
Հողի քաղվածքի և հատակագծի փաստաթղթեր----հինգ հազար դրամ

Կողմ (5) Դեմ (0) Չեռնապահ (0)

Արայիկ Թորոսյան
Բարսեղ Եսայան
Լյովա Դանիելյան
Հրայր Եղիազարյան
Սամվել Աշրաֆյան

Համայնքի ղեկավար՝ Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N 72-Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԻՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի բնակիչ Գոհար Թանդիլյանի դիմումը, համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

Լեռնապատ համայնքի բյուջեի գործառնական դասակարգման 10 բաժնի 4 խմբի 1 դասի 4729 հոդվածով նախատեսված միջոցներից թույլատրել համայնքի ղեկավարին տալ Գոհար Թանդիլյանին՝ տասը հազար դրամ:

Կողմ (5)

Դեմ (0)

Չեռնապահ (0)

Բարսեղ Եսայան

Լյովա Դանիելյան

Հրայր Եղիազարյան

Սամվել Աշրաֆյան

Արայիկ Թորոսյան

Համայնքի ղեկավար Վանո Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ. Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան, հեռ. 0322-6-87-81

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2011 թվականի N 73-Ն

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2011թ. ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3 կետով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. 2011թ. Լեռնապատ համայնքի փոփոխված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

ա. եկամուտների գծով՝ պակասեցնել 1342 տողում 60,0 հազ. դրամ:

բ. ծախսերի գծով՝ պակասեցնել 52,2 հազ. դրամ 04բաժնի 2 խմբի 1 դասի հոդված 4111-ից, իսկ 4131 հոդվածից 7,8 հազ. դրամ, ընդամենը՝ 60,0 հազ. դրամ:

գ. ծախսերի գծով՝ պահուստային ֆոնդից 60,0 դրամ տեղափոխել 01 բաժնի 1 խմբի 1 դասի 4214 հոդված՝ հեռախոսավարձ վճարելու նպատակով:

2. Հաստատել 2011թ. Լեռնապատ համայնքի փոփոխված բյուջեն

ա. եկամուտների գծով՝ 35663,0 հազ. դրամ

բ. ծախսերի գծով՝ 39605,9 հազ. դրամ

գ. տարեսկզբի ազատ մնացորդ՝ 3942,9 հազ. դրամ:

Կողմ (5) Դեմ (0) Չեռնապահ (0)

Արայիկ Թորոսյան

Բարսեղ Եսայան

Լյովա Դանիելյան

Հրայր Եղիազարյան

Սամվել Աշրաֆյան

Համայնքի ղեկավար Վանո Եղիազարյան